

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

..... 2012 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ին <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ոմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչներին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին>> N 53-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշմամբ հաստատված հավելվածի ցուցակից հանվել N N 36-րդ, 115-րդ, 120-րդ, 147-րդ, 193-րդ, 243-րդ, 244-րդ, 303-րդ, 304-րդ և 306-րդ կետերը ,

2) որոշմամբ հաստատված հավելվածի ցուցակը՝ N333-րդ կետից հետո, լրացնել հետևյալ նոր N N 334 -354-րդ կետերով .

<<

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Համայնքի անվանումը	Վնասվածության մակարդակը
1	2	3	4
334	Բադալյան Լազիկ Հովհաննեսի	Ոսկեպար	նվազագույն
335	Մանուչարյան Նավասարդ Յապոնի	Ոսկեպար	նվազագույն
336	Աղասարյան Արամայիս	Ոսկեպար	նվազագույն
337	Դոդրոյան Վալյա	Ոսկեպար	նվազագույն
338	Պապյան Գոհար	Ոսկեպար	նվազագույն
339	Մխիթարյան Աշխեն	Վազաշեն	նվազագույն
340	Աղաջանյան Հասմիկ	Վազաշեն	նվազագույն
341	Ղազարյան Մամիկոն	Վազաշեն	նվազագույն
342	Խաչատրյան Վարդուշ Հարությունի	Մովսես	նվազագույն
343	Վանեսյան Ղումաշ Օհանի	Մովսես	նվազագույն

344	Վանեսյան Աշոտ Նավասարդի	Մովսես	նվազագույն
345	Վանեսյան Սուրեն Ղևոնդի	Մովսես	նվազագույն
346	Վանեսյան Երջանիկ ՌԻՆԱՆԻ	Մովսես	նվազագույն
347	Բոզինյան Նաիրե	Սևքար	նվազագույն
348	Դարբինյան Վանիկ	Տավուշ /Թովուզ/	նվազագույն
349	Ադամյան Պարգև Խաչիկի	Տավուշ /Թովուզ/	նվազագույն
350	Չիթչյան Վահրամ Յուրիկի	Բարեկամավան	նվազագույն
351	Այվազյան Սերգեյ Գեղամի	Այգեպար	նվազագույն
352	Ավալյան Մանյա Գրիգորի	Այգեպար	նվազագույն
353	Ադամյան Սամվել Մուշեղի	Բերդ	նվազագույն
354	Թումանյան Անահիտ Վոլոդյայի	Բերդ	նվազագույն

>>

3) 4-րդ կետի 1-ին ենթակետում «երկամյա» բառը փոխարինել «յոթամյա» բառով:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Տ.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը /այսուհետ՝ Որոշման նախագիծ/ մշակվել է Ոսկեպար, Վազաշեն, Մովսես /Մոսեսգեղ/, Սևքար, Տավուշ /Թովուզ/, Բարեկամավան, Այգեպար և Բերդ համայնքների ղեկավարների գրությունների և ավագանիների որոշումների հիման վրա:

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

ՀՀ Տավուշի մարզերի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ոմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրների լուծման հետ կապված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ին «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ոմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչներին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին» N 53-Ա որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով:

Համաձայն Որոշման հաստատվել է ֆինանսական օգնությունների չափը և ցուցակը՝ որտեղ ընդգրկված են 332 ընտանիքներ:

Որոշման 2 կետի 3) ենթակետի համաձայն ֆինանսական օգնություն ստանալու իրավունքից չեն օգտվում այն քաղաքացիները, որոնք.

ա/ տվյալ բնակավայրում չունեն մշտական բնակություն,

բ/ ունեն սեփականության իրավունքով այլ բնակելի տարածություն,

գ/ նախորդ տարիներին իրականացված պետական կամ միջազգային կազմակերպությունների աջակցության ծրագրերի շրջանակներում օգտվել են բնակարանային պայմանների բարելավման իրենց իրավունքից:

Հաշվի առնելով Որոշման այս պահանջը և այն, որ Բերդ քաղաքի բնակիչ Վրեժ Աթոյանը հրաժարվել է իրեն նախատեսված գումարից, վերը նշված 332-ից ֆինանսական օգնություն է տրամադրվել 322-ին: Արդյունքում Տավուշի մարզին նախատեսված 107.0 մլն.դրամից օգտագործվել է 102.8 մլն.դրամը՝ չի ծախսվել է 4.2 մլն.դրամ:

Միաժամանակ, մարզպետարան են դիմել՝ Ոսկեպար, Վազաշեն, Մովսես /Մոսեսգեղ/, Սևքար, Տավուշ/Թովուզ/, Բարեկամավան, Այգեպար և Բերդ համայնքների ղեկավարները այն մասին, որ 2010 թվականին ոմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների ստուգման, հաշվառման արդյունքում որոշ քաղաքացիների տներ դուրս են մնացել ուսումնասիրություններից ու չեն ընդգրկվել օգնություն հավակնողների ցուցակում, և խնդրել են հնարավորության դեպքում ֆինանսական օգնություն տրամադրել նշված տնատերերին:

Ներկայացվել է նաև նշված համայնքների ավագանիների որոշումները:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Որոշման նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ոմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչներին նախատեսված ֆինանսական միջոցների սահմանում օգնություն տրամադրել համայնքների ավագանիների որոշմամբ հաստատված և մարզպետարան ներկայացված նախորդ՝ 2010թ.-ի ուսումնասիրությունների արդյունքում հաշվառումից դուրս մնացած ընտանիքներին, որի համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ին N 53-Ա որոշման մեջ կատարել անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ:

2. Կարգավորման առարկան՝

ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ոմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավման հետ կապված հարցերի կարգավորումն է:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվում է բարելավել ՀՀ Տավուշի մարզերի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ոմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանները:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ

Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմնի
բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

Կատ. Ֆ.Ափինյան
Հեռ.0263-3-22-20,
094-78-28-38